

15. ՀԱՐԻԻՐ ԹՈՒՄԱՆ ՀԱՐԿԻՆ ԲԱՐՁՈՒՄԸ

Յաջողութիւնները, որոնք ընկերացած էին Մովսէս վարդապետին յընթացս անոր 15ամեայ գործունէութեան, գտան իրենց պայծառագոյն զազաթնակէտը յայնմ, որ յաջողեցաւ իրեն բառնալ տալ այն 100 թուման տարեվճարն կամ «մուղաղայն», զոր Շահ Աբաս անիրաւաբար դրած էր էջմիածնի կաթողիկոսական Աթոռին վրայ:

Ի՞նչպէս եւ ե՞րբ դրուած էր այս տարեվճար հարկը կաթողիկոսական Աթոռին վրայ:

Ղուկաս Գառնեցի այսպէս կը պատմէ այս «ծանրալուծ հարկապահանջութեան» սկզբնաւորութեան մասին, 1631ին իրրեւ ժամանակակից. «Յառաջ քան զԺՆ. ամ (1615) տգէտ եւ անխմայ առաջնորդքն ընդ միմեանս խանդացեալ ի պատիւ կաթողիկոսութեան, եւ մատնեն կամօք իւրեանց զկաթողիկոսարանս ի ներքոյ մեծ հարկի եւ զապալու. զի որ ոք տացէ ամ յամէ զհարկն ի Դուռն արքունի, որ էր հարիւր թուման, նա լիցի կաթողիկոս»: Գառնեցւոյ ակնարկութիւնը Դաւիթ եւ Մելքիսեդեկ կաթողիկոսներու մրցակցութեան մասին է, որ տեղի ունեցած էր 1614ին. Դաւիթ Պարսկաստանէն ելած եկած էր էջմիածին, տիրանալու Աթոռին, բայց բախած էր հոն Մելքիսեդեկի մրցակցութեան: Դաւիթ ունէր իւր ետեւը Ջուղայեցիները, Մելքիսեդեկ՝ Երեւանցիները: Շահ Աբաս, որ չըջապատուած էր Ջուղայեցիներէ, ի սկզբան Դաւիթ